

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻ ՍՐԲՈՒՀԱՌՈՅՆ ԺԸՆԸՎԻՆԵՒԱՅ ԿԱՄ ՊԱՆԹԷՌՆ Ի ԲԱՐԻԶ

Քամին 1764 Ս. ժընըլիեւոյ վանաց
հին եկեղեցին կործանելու վիճակի մէջ
լինելով, լուդովիլիկոս ժի նոր տաճարի
մը շնութեան ձեռք զարկաւ, ըստ ծը-
րադրի Սուլֆոյ ճարտարապետին, յա-
նուն վերոյիշեալ Արբուհոյն՝ պաշտպա-
նին Փարիզու, Եկեղեցւոյն հիմունքը ձը-
գուեցան, և առաջին քարն ղրուեցաւ
ի 1764, 'ի 6 սեպտեմբեր ամսոյ:

Քարիզու ամէն նորագոյն շինուածնե-
րէն աւելի չքեզալզարդ է Պանթէոնն, և
միանդամայն նշանաւոր իրեն կրած զա-
նազան յեղափոխութիւններով, որոց
նշանին նաև այսօր կ'երեին իր վրայ:

Կարծես կրօնք և փիլիսոփայութիւն
իրենց ասպարիզի և մրցման տեղի ըն-
տրեր են զայն, և անդ մին իւր քարե-
պաշտութեան նշաններն արձանացու-
ցեր է, և միւսն հասարակապետական
և ռամկավարչական դրօն է պարզեր:

Եկեղեցւոյն յատակագիծն կը ներ-
կայացընէ յունական խաչաձև մը, ո-
րոյ չորս թներն կը միանան ընդարձակ
կենդրնի մը մէջ, որոյ վրայ կ'ամրառ-
նայ ջահազարդ վսեմ կաթոլիկէն :
Ճակասն յօրինեալ է գեղեցիկ յոյն և
հռովմէական ճարտարապետութեամբ,
տասն և մի աստիճան քարձրութեան
վրայ սիւնավարդ մնատքն՝ շինուած է
Հռովմայ Պանթէոնին նմանութեամբ:
ինչպէս ներկայացուած պատկերիս մէջ
կ'երեի, առաջին կարգին վրայ վեց
մին կը տեսնուին, որոց ետև շարուած
են ուրիշ սիւներ, և ամէնն ՚ի միասին
կը համրուին քսան և երկու սիւնք :


տերեներուն՝ այնպիսի բնականութիւն
տուած է արուեստն, զոր չէ հնար գերա-
զանցել բայց ոչ նոյնպէս են նաև սեանց
երկայնութեան վրայ յօրինուած գի-
ծերն, որը շատ ստորին կը մնան նախնի
շինուածոց ճշգութենէն : Այս սեանց
վրայ յեցած է եռանկիւնածն պսակ
մը, յորում կը գտնուին ընտիր խորա-
քանդակին սիւնազարդ գաւթին ա-
յակողմն և ձախակողմն զարդարուած
են արձաններով : Ճակատին հակառակ
կրոյմ կայ ուրիշ սիւնազարդ գաւթիթ
մը գորական ճարտարապետութեամբ :
Եկեղեցւոյն ներսը կը տեսնուի քարա-
շէն ամենադեղեցիկ սիւնավանդակ մը,
և զանազան անուանի նկարչաց պատ-
կերներ Եկեղեցւոյն տակը կան գերեզ-
մանք Լակրանժի, Սուլֆիեայ, Վոլենոի,
Ռուտոյի, և ուրիշ երեսերի անձանց առա-
ջին կայսերութեան, բայց ոչ անմա-
հութեան պատահ ժառանգելու շափ
արժանաւորաց :

Միրապոյի մահուանէն վերջ՝ ժողո-
վարանն այս եկեղեցին փոխեց՝ ի դամ-
րարան այն ամէն գաղղիացի անձանց,
որը իրենց հանճարով կամ առաքինու-
թեամբ և կամ ուրիշ ծառայութիւն-
ներով հայրենեաց համար արդիւնաւոր
եղած էին : Այն ատեն թէ արտաքոյ և
թէ ներքոյ չէնքն զանազան փոփոխու-
թիւններ կրեց : Ինչպէս նաև արտաքին
ճակատին վրայ, պատկերիս մէջ ահս-
ուածին համեմատ, գրուեցաւ հետե-
ւել իմաստն .

ԱՐ ՀՈՑԱԿԱՊ ԱՐՍ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՀԱՅՐՆԵՐԻ:

Յամին 1794, ապրիլի 4, հսն փոխառ դրուեցան Միրապոյի ոսկերքն . և նոյն տարւոյն յուղեայ 14ին՝ Վոլզեռի ոսկերքն . Հոն թաղուեցաւ նաև 1793ին, յանուար 24ին, Միքայէլ Լըֆէլլըդիէ . Հոն հանգչելու պատին ունեցան 'ի մէջ այլոց աննշան անձանց նաև զօրավարն

Պօրըբէր, Մարագ, Յակոբոս Ռուսոյ, և այլն : Բայց ժողովուրդն՝ որ զիտէ իրեն հանդարտ մաքով գտնուած ժամանակ իւրաքանչիւրին իւր արժանաւոր դամբանը շնորհել, ժամանակ մ'անցնելէ վերջը, հանեց անվայիլ խստութեամբ այն սոկորներէն շատերը, և զայնս աղ-



բիւսաց մէջ և կամ անմարդի միայնու թեան գատապարտեց : Խոկ 1795ին Ազգային ժողովն վճռեց՝ որ քաղաքացւոց մը՝ մահուանէն տարս տարի վերջը միայն կարելի լինի Պանթէոնի պատիւը շնորհել : Պորպոնաց ժամանակ Պան-

թէոնն եկեղեցի լինելու պատիւն ունէր, զոր պղծեցին 1830ին յեղափոխութեան ժամանակ . բայց յետոյ 1854 տարւոյն մէջ դարձեալ իւր նախկին փառաց և պայծառութեան արժանացաւ մինչև ցայսօր :